Կարգապահական գործ թիվ ԿԳ-22016

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 125-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/82-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լիլիթ Ղազանչյանի, Խորհրդի անդամներ՝ Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի և Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանի (արտոնագիր՝ թիվ 944) (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Խաչատուր Պերճ Ճոզիկեանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 2022 թվականի փետրվար մարտ ամիսներին դիմել է փաստաբան Կարինե Սիմիդյանին երկու տարբեր գործով և փոխանցել է նրան գումար դրանցով զբաղվելու համար:

Դիմողը 2022 թվականի հուլիսի 13-ին՝ ի լրումն իր դիմումի հայտնում է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանը պետք է ներկայացներ իր շահերը ՄՈԳՈ կազմակերպության հետ կապված գործում և կատարեր անհրաժեշտ գործարքներն իր անունից՝ մասնավորապես, իր ավտոմեքենայի անվանափոխությունը կատարելու համար, ինչի նպատակով Դիմողը փաստաբանին վճարել է 200.000 ՀՀ դրամ և 200 ԱՄՆ դոլար, ինչպես նաև տվել եմ 25.05.2022թ.-ին լիազորագիր՝ համապատասխան գործողությունների կատարման համար:

Դիմողը նշել է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանը ստանձնել է իր իրավունքների պաշտպանությունը, սակայն պայմանագիր չի կնքել իր հետ, ոչ մի գործողություն չի կատարել և չի պատասխանում իր հեռախոսազանգերին:

Դիմողը կից ներկայացրել է իր կողմից փաստաբան Կարինե Սիմիդյանին 05.06.2022թ. տրված լիազորագրի, ինչպես նաև իրենց (+37493264147 հեռախոսահամար) միջև նամակագրության պատճենները:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել

կարգապահական վարույթ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 145-Ա/ԿԳ-22016 որոշմամբ փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանի նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝** «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք**) ***2.7.2, 3.1.3, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի*** **խախտման հատկանիշներով:**

2022 թվականի հուլիսի 19-ին կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյան (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Կարգապահական վարույթի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված իր դիրքորոշումը:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

«Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Խաչատուր Պերճ Ճոզիկեանի դիմումների վերաբերյալ:

Կարգապահական գործի ընթացքում Փաստաբանը 12.12.2022թ. ներկայացրել է դիմում, նշելով որ դիմումատուի ներկայացված դիմումը չի համապատասխանում իրականությանը և խնդրել է այն մերժել անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

2022 թվականի սեպտեմբերի 19-ին կարգապահական գործը Նախապատրաստող կազմել է եզրակացություն:

2022 թվականի սեպտեմբերի 22-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2022 թվականի դեկտեմբերի 13-ի ժամը՝ 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զանքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, դրան կից ներկայացված լիազորագրի 05.06.2022թ. պատճեով, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև հաղորդակցությունների պատճեներով:*

2. Փաստաբանը Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը պետք է իրականացներ ՄՈԳՈ կազմակերպության հետ կապված հարաբերություններում՝ մասնավորապես կատարեր անհրաժեշտ գործարքներն Դիմողի ավտոմեքենայի անվանափոխության համար: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև հաղորդակցությունների պատճեներով:*

3. Գործն ընդունելուց հետո Փաստաբանը Դիմողի հետ գրավոր ձևով չի կնքել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև հաղորդակցությունների պատճեներով: Միաժամանակ, պայմանագիր կնքելու հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում է Փաստաբանը, սակայն վերջինս որևիցե ապացույց չի ներկայացրել նշվածի վերաբերյալ:*

4. Փաստաբանը՝ Դիմողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ստանձնելու պահից (2022 թվականի փետրվար մարտ ամիսներ) մինչև կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումը Պալատ ներկայացնելն (17.06.2022թ.) ընկած ժամանակահատվածում, չի իրականացրել անհրաժեշտ գործողությունները հանձնարարության արագ ու արդյունավետ (ժամանակին) կատարման ուղղությամբ: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև հաղորդակցությունների պատճեներով: Միաժամանակ, իր կողմից իրականացված գործողությունների ապացուցման պարտականությունը կրում է Փաստաբանը, սակայն վերջինս որևիցե ապացույց չի ներկայացրել նշվածի վերաբերյալ:*

5. Հանձնարարության կատարման ընթացքի մասին Փաստաբանը կանոնավորապես չի տեղեկացրել Դիմողին և չի պատասխանել նրան հետաքրքրող հարցերին: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև հաղորդակցությունների պատճեներով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարինե Սիմիդյանը փաստաբան է հանդիսանում

24.10.2009թ., և տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Կարինե Ալբերտի Սիմիդյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի համաձայն՝ *Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ վճարովի հիմունքներով իրավական օգնություն ցույց

տալու դեպքում գործն ընդունելուց հետո՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում, վստահորդի հետ կնքել հասարակ գրավոր ձևով պայմանագիր, ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար և դրա վերաբերյալ կանոնավորապես տեղեկացնել իր վստահորդին՝ պատասխանելով նրան հետաքրքրող հարցերին: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Դիմողն, ըստ էության, փաստաբան Կարինե Սիմիդյանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր չկնքելու, ինչպես նաև վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես չտեղեկացնելու վարքագիծը:

Տվյալ դեպքում, սույն կարգապահական վարույթի շրջանակներում Խորհուրդը արձանագրում է, որ Փաստաբանը՝ առնվազն հունիս ամսին Դիմողից կողմից լիազորագիր ստանալուց հետո՝ այսինքն հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից Դիմողի հետ չի կնքել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը, որպիսի կնքման պայմաններում Դիմողի և Փաստաբանի իրավահարաբերությունները կստանային որոշակիություն և նրանց համար կստեղծվեին անհրաժեշտ իրավական երաշխիքներ: Իր հերթին Փաստաբանը չի ներկայացրել որևիցե ապացույց առ այն, որ Դիմողի հետ կնքվել է պայմանագիր:

Հարկ է նաև նշել, որ հանձնարարության պատշաճ կատարման ուղղությամբ գործողությունների իրականացումից ուղղակիորեն բխում է նաև դրա արագ և արդյունավետ (ժամանակին) իրականացնելու հանգամանքը: Այսինքն, եթե փաստաբանը հանձնարարության կատարման ուղղությամբ ձեռնարկում է որոշակի գործողություններ, ապա դրանք պետք է լինեն ոչ միայն պատշաճ, այլ նաև արագ ու արդյունավետ՝ վստահորդի իրավունքների ու շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու նպատակով:

Նման պայմաններում, անկախ պայմանագիրը կնքելու հանգամանքից փաստացի ստանձնելով հանձնարարության կատարումը լիազորագիր հիման վրա, Փաստաբանը պարտավոր էր կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունները, մինչդեռ Դիմողի կողմից իրավաբանական օգնության համար Փաստաբանին դիմելու (2022 թվականի փետրվար մարտ

ամիսներ), ինչպես նաև Փաստաբանին լիազորագիրը տալու (2022 թվականի հունիս ամիս) պահից, մինչև կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումը Պալատ ներկայացնելը (17.06.2022թ.), ինչպես նաև սույն կարգապահական վարույթի ընթացքում, Փաստաբանը ըստ էության որևիցե գործողություն չի իրականացրել, ինչպես նաև չի ապացուցել իր կողմից նման գործողություններ ձեռնարկելու կամ դրանք իրականացնելու հանգամանքը:

Բացի այդ, Խորհուրդը նաև արձանագրում է, որ Փաստաբանի հետ կապ հաստատելու պայմաններում, վերջինս այնուամենայնիվ կանոնավորապես չի տեղեկացրել Դիմողին հանձնարարության կատարման ընթացքի մասին, ինչպես նաև չի պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի կողմից խախտվել են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:

Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական

տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով

նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Անդրադառնալով կարգապահական խախտման դրսևորման մեղքի ձևին՝

Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը դրսևորել է համապատասխան վարքագիծը դիտավորությամբ, քանի որ գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանին (արտոնագիր՝ թիվ 944) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանի (արտոնագիր՝ թիվ 944) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով նիստը նախագահող՝ Լիլիթ Ղազանչյան

13 դեկտեմբերի 2022թ.
թիվ ԿԳ/82-Ա
ք. Երևան